

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՏԻԿ ԲԱԹԱՐԱՆԻ ԿԱԶՄՈՒՄԸ

Ռ. Կ. ՂԱԶԱՐՅԱՆ

Գրավոր խոսքն արդեն չի հանդիսանում ուսումնասիրության այն միակ տարակա՛ն, որով զբաղվում էր լեզուն քննող գիտությունը: Այժմ լեզվաբանությունն իր ուշադրությունը կենտրոնացնում է նաև լեզվի այնպիսի մի կողմի վրա, որը համեմատաբար քիչ է ուսումնասիրված: Լեզվական այդ կողմը բանավոր խոսքն է, որի անբավարար ուսումնասիրությունն առաջին հերթին բացատրվում է այն լուրջ դժվարություններով, որոնք կապված են տվյալ բնագավառի հետազոտության հետ: Սակայն շնայած այդ խոչընդոտներին, նշված բնագավառի ուսումնասիրության սկիզբը դրված է և նկատելիորեն կատարվում էն առաջին քայլերը:

Բանավոր խոսքի ուսումնասիրությունը չի առաջնորդվում ինչ-որ հետաքրքրասիրության նկատառումներով: Այն պարզում է կենդանի խոսքում հանդես եկող տարրերի ուրույն հարաբերությունները: Հետազոտությունները ցույց են տալիս, որ բանավոր խոսքում գործող լեզվական միավորները իրենց գործածելիության համամասնությամբ ու փոխհարաբերակցությամբ որոշակիորեն տարբերվում են գրավոր խոսքում գործածվող լեզվական տարրերից: Հայոց լեզվում համապատասխան հետազոտությունների բացակայության հետևանքով առայժմ չենք կարող օբյեկտիվորեն ցույց տալ այդ տարբերությունները: Մինչդեռ ֆրանսերենում կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս պարզ պատկերացում կստանալ այդ հարցի վերաբերյալ: Օրինակ. Գոգենհայմի և Վանդեր Բեկեի հաճախականության բառարանների (որոնցից առաջինն ընդգրկում է բանավոր խոսքի տվյալները, իսկ երկրորդը՝ գրավոր) արդյունքների համեմատությունը՝ ցույց է տալիս, որ ֆրանսերեն լեզվում գոյություն ունեն այնպիսի համանիշ բառեր, որոնք իրենց գործածությամբ խիստ տարբերվում են գրավոր ու բանավոր խոսքերում: Այսպես. quand (երբ) և lorsque (երբ) համանիշ բառերից երկրորդը բանավոր խոսքում վեց անգամ ավելի պակաս է հանդես գալիս, քան գրավորում: Կամ՝ être (լինել) և avoir (ունենալ) բայերը Գոգենհայմի մոտ ունեն համապատասխանաբար

14083

312135

և $\frac{11529}{312131}$ հարաբերական հաճախականություն: Իսկ Հենմոնի՝ գրավոր խոսքին վերաբերող հաճախականության բառարանում այդ նույն բառերը՝ ինչպես նաև

¹ Նշված դժվարությունները կայանում են նրանում, որ ի տարբերություն գրավոր խոսքի, այստեղ բացակայում է շոշափելի տեքստը: Հետևապես այս բնագավառի ուսումնասիրությունը պետք է կատարել ձայնագրումների, լրացման քարտերի, սղագրությունների, զրույցների և այլնի միջոցով:

² Տե՛ս G. Gaugenheim, Mishean, L'élaboration du français élémentaire, Paris, 1956, էջ 113:

³ Տե՛ս Գոգենհայմի և մյուսների նշված գիրքը, էջ 118:

Շտեյնֆելդտի բառարանում ԾЫТЬ բառը, ունեն հետևյալ հարաբերական գործածությունները. être — $\frac{8242}{400000}$, avoir — $\frac{5488}{400000}$, ԾЫТЬ — $\frac{4186}{400000}$ Բեր-

ված վկայությունների հակադրությունը արդարացիորեն հաստատում է վերոհիշյալ մտքի համապատասխանությունը իրականության անժխտելի փաստերին: Եթե դա այդպես է, ապա լեզվաբանական (նաև լեզվի գործնական ուսուցման) և այլ տեսակետներից բանավոր ու գրավոր խոսքերի օբյեկտիվորեն առանձնացված միասնական արդյունքները լուրջ գնահատության կարող են արժանանալ:

Այդ նկատառումներից ելնելով, մենք փորձեցինք հայոց լեզվի նկատմամբ կատարել բանավոր խոսքի փորձնական ուսումնասիրություն՝ անկետային հարցման մեթոդի օգնությամբ:

Անկետային մասնայական հարցմամբ թեմատիկ պլանով բառեր առանձնացնելը առնչվում է մի շարք հանգամանքների հետ: Ամեն մի լեզվով խոսող յուրաքանչյուր մարդու մտածողության մեջ կան համապատասխան լեզվին վերաբերող բազմաթիվ բառ-հասկացություններ, սակայն այդ հասկացությունների կոնկրետ օգտագործման անհրաժեշտությունը սերտորեն կապված է այն առկա ազդակի կամ այսպես կոչված «իմաստային դաշտի» հետ, որը տվյալ պահին իր վրա է կենտրոնացնում մարդու ուշադրությունը: Այսպես, եթե որևէ մեկի ուշադրության ենք ներկայացնում մի կոնկրետ թեմա կամ իմաստային դաշտ, ասենք՝ «զգեստներ», ապա տվյալ մարդու հիշողության մեջ անմիջապես կհայտնվեն այն հասկացությունները, որոնք անմիջականորեն կապված են հենց այս թեմայի հետ: Այստեղ իհարկե, չպետք է կարծել, թե խոսքը վերաբերում է մի անժանոթ թեմայի, որի շուրջը տվյալ անձնավորության հիշողության մեջ չկա ոչ մի հասկացություն: Թեման պետք է նախապես ծանոթ լինի, այլապես հիշողությունը չի կարող դեր խաղալ, քանի որ վերջինիս էությունը նախօրոք իմացածի ճանաչումն ու վերաբառագրումն է: Այդ կարևոր հանգամանքը լեզվաբանական, մանկավարժական ու հոգեբանական հետաքրքրություն է ներկայացնում: Այստեղ անհրաժեշտ ենք համարում խոսել անկետային հարցման միջոցով թեմատիկ առումով բառերի ընտրման ժամանակ աշակերտների մոտ հանդես եկած հոգեբանական յուրահատկությունների մասին: Այդպիսի յուրահատկությունների ենք հանդիպում մեր առանձնացրած դրեթև բոլոր թեմաներում, որովհետև ամեն մի թեմա մի իմաստային խումբ է: Իսկ այդպիսի խումբ արտահայտելիս երեխաները ի հայտ են բերում ինչպես հոգեբանական, այնպես էլ սոցիալական ու այլ յուրահատկություններ: Երեխաների մոտ հոգեբանական յուրահատկությունների առկայությունը կտրված չէ կոնկրետ իրականությունից: Իրականության մեջ տեղի ունեցած այս կամ այն դեպքն ու երևույթը, լինեն դրանք արտակարգ, թե որոշ առումով նաև սովորական, խոր ապավորություն են թողնում երեխաների հոգեկան աշխարհում: Բնական է, որ այդպիսի դեպքերը, որոնք որևէ կերպ կապված են մեր առանձնադրած թեմաների հետ, իրենց արտացոլումն են գտել փորձնական աշխատանքների նպատակով կազմված լրացման քարտերում: Սրա ապացույցը կարող են հանդիսանալ մեր բոլոր թեմաները: Օրինակ, «Մարմնի մասերը» թեմայում՝ ոտք, գլուխ, ձեռք, աչք, ազդր և այլ բառերի կողքին հանդիպում ենք այնպիսի բառերի, որոնք մարմնի մասեր չեն, բայց կարող են վերաբերել նրանց: Ահա դրանք՝

ջարդվել, վիրահատել, արնահոսություն, կուրանալ, հիվանդ, ցավել, բուժել, տանջվել, կտրել, վիրակապ, կապել, անբուժելի, մեռնել և այլն:

Հետաքրքրական է նաև սոցիալական որոշ յուրահատկությունների դրսևորումը տարբեր թեմաներում: Օրինակ. քաղաքային վայրին վերաբերող լրացման քարտերում իրենց գործածությամբ ակնհայտորեն տարբերվում են այնպիսի բառեր, որոնք ավելի հատուկ են քաղաքային միջավայրի նկարագրմանը: Ճիշտ նույն պատկերն են ներկայացնում գյուղական դպրոցներում անցկացրած փորձնական աշխատանքների արդյունքներն ամփոփող քարտերը: Սրանցում ընդգծված որոշ բառեր էլ վերաբերում են գյուղական կյանքի ու միջավայրի արտահայտմանը: Ահա՝ անցում, գաղանանոց, հյուրախաղ, հանրակացարան, ֆիրմա, մետրո, արվեստ, տպարան, տաղավար, նրբանցք, հաստատություն, ջրավաղան, գրաշար և բաղմամբիվ այլ բառեր գործածել են միայն քաղաքային դպրոցներում սովորողները, իսկ ամբարել, ֆերմա, թրթուր և այլն՝ հիմնականում շրջանային դպրոցների աշակերտները:

Վերջապես, այդպիսի յուրահատկության ամենաակնառու փաստն այն է, որ միայն էջմիածնի դպրոցներում են գործածվել «եկեղեցի» ու «վարդապետ» բառերը:

Անկախ նշված յուրահատկություններից, տարբեր վայրերի արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ տարբերություններն ընդհանուր առմամբ շատ քիչ են:

Թեմատիկ առումով բառերի ուսումնասիրության մեր փորձը ցույց է տալիս նաև, որ բացի կոնկրետ թեմատիկ բառերից օգտագործվել են նաև ոչ թեմատիկ, ավելի ընդհանրական բառեր, որոնք չեն սահմանափակված մեկ թեմայի շրջանակներում: Օրինակ. աշխատել, գեղեցիկ, գնալ, սիրել, լսել, խոսել, կարդալ, հարցնել, հիանալ, մաքրել, նայել, տանել, տեսնել, օգնել և շատ այլ բառեր գործածվել են մեր լրացման քարտերի գրեթե բոլոր կետերում:

Ստավել ուշագրավ է մեկ այլ կարևոր հանգամանք: Դա պարզ (նաև ածանցավոր) ու բարդ բառերի փոխհարաբերակցության հարցն է: Մեր ամբողջ ընտրանքի հետազոտությունը ցույց տվեց, որ բոլոր թեմաներում էլ պարզ ու ածանցավոր բառերի գործածությունը շատ կայուն է, և նրանք օժտված են բարձր հաճախականությամբ: Բարդ բառերը, ընդհակառակը, ունեն անկայուն գործածություն ու շատ ցածր հաճախականություն: «Մարմնի մասերը» թեմայում գործածված 232 տարբեր բառերից միայն 13 է բարդ, իսկ «Բնություն» թեմայում հանդես եկած 465 տարբեր բառերից միայն՝ 48-ը: «Մարմնի մասերը» թեմայի առաջին հիսուն ամենահաճախ գործածված բառերում կա միայն մեկ բարդ բառ, «Բնություն» թեմայի առաջին վաթսուն առավել հաճախ գործածված բառերի շարքում՝ նույնպես միայն մեկ բարդ բառ և այլն: Դա նշանակում է, որ բարդ բառերի կրկնության ցուցիչը բանավոր խոսքում ավելի ցածր է, քան գրավոր խոսքում: Այդ նույն «Բնություն» թեմայի առաջին 100 բառում կա չորս բարդ բառ: Ուրեմն, բարդ բառերի հանդես գալու ցուցիչը հավասար կլինի 0,04-ի իսկ Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի 100 բառից կազմված մի հատվածում (հ. IV, էջ 298) բարդ բառեր են գործածվել ինն անգամ (բարդ բառերի հանդես գալու ցուցիչը այստեղ հավասար է 0,09-ի): Չնայած համեմատության պայմաններն ակնհայտորեն տարբեր են և ընտրանքները՝ սահմանափակ. այնուամենայնիվ բերված տվյալները ցույց են տալիս, որ տիպաբանա-

կան տեսակետից բանավոր ու գրավոր խոսքերն ունեն նկատելի տարբերություններ, որոնք արժանի են լուրջ ուշադրության:

Լրացման քարտերի միջոցով բառերի առանձնացված ընտրանքում օգտագործվել են շատ բարբառային և այլ լեզուների պատկանող բառեր, որոնք հանդիպել են թե՛ քաղաքային և թե՛ շրջանային դպրոցներում: Օրինակ՝ պոռնկ, բոթել (հրել), կուռ (թև), բազուկ (ճակնդեղ), հորել (թաղել), աբլոր, մանդալ, կուրտկա, մայկա, ռետուզ և այլն: Սրանք հաշվի չեն առնվել թեմատիկ բառարանը կազմելիս, թեև այդ տվյալները կարող են այլ մասնագետներին համար օգտակար լինել:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԹԵՄԱՏԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ժամանակակից հայոց լեզվի բանավոր խոսքի մի որոշակի շերտը թեմատիկ առումով ուսումնասիրելու համար մենք կիրառել ենք անկետային հարցման մեթոդը: Անկետային հարցերը կազմելիս նկատի ենք ունեցել ֆրանսիական գիտնականների փորձը⁴, սակայն նրանց կազմած թեմաները մեր հարցերում ենթարկվել են հական փոփոխությունների: Առանձնացված թեմաները, որոնք հետո տեղաբաշխվեցին լրացման քարտերում, տասնչորսն են.

1. Մարմնի մասեր
2. Զգեստներ (կանացի և տղամարդու)
3. Տուն և տան պարագաներ
4. Ընտանիք և հարազատներ
5. Օրվա սնունդն ու նրանից օգտվելու առարկաներ
6. Դպրոցական կյանք և աշակերտական պիտույքներ
7. Պիտներական կյանք
8. Բնություն
9. Քաղաք (կուլտուրական, գիտելիքն ու արտադրական հիմնարկներ)
10. Բյուզ և դաշտային աշխատանքներ
11. Տրանսպորտի միջոցներ
12. Կենդանիներ (վաճիկ և ընկանի)
13. Խաղեր
14. Մասնագիտություններ:

Թեմաները կազմելուց հետո սահմանվեց ընդհանուր ընտրանքի նախնական, մոտավոր ծավալը (մոտ 83 հարցաբառ, բանի բը պատրաստվեց 351 անկետա⁵, որոնցից չորսբանչուրը բաղկացած է 14 կետից, իսկ ամեն մի կետի շուրջ առաջարկվում է գրել 17-ից ոչ պակաս համապատասխան բառ): Լրացման քարտերը (անկետա), բացի 14 թեմայից, իրենց մեջ ընդգրկում են այնպիսի տեղեկություններ, որոնք վերաբերում են էրեխաներին (սովորելու վայրը, դպրոցը, դասարանը, սեռը և անուն-ազգանունը):

Գործնական աշխատանքները կատարվեցին հանրապետության տարբեր վայրերի մի շարք դպրոցների 8—10-րդ դասարանների աշակերտություն շրջա-

⁴ Անկետային հարցման մեթոդի կիրառումը ֆրանսիական գիտնականների մոտ ուներ այն նպատակ: Նրանք այդ մեթոդով ոչ թե ձգտում էին կազմել թեմատիկ բառարան, այլ նրանց հետաքրքրում էր սահմանել բանավոր խոսքի արդեն առանձնացրած ոչ թեմատիկ բառապաշարի զրոծածելիության աստիճանը:

⁵ Գյուղական վայրի համար Խրվել է 141 անկետա, իսկ քաղաքայինի՝ 210:

նում: Յուրաքանչյուր աշակերտի արվում էր մեկ լրացման քարտ: Այն պետք է լրացվեր մեկ ժամվա ընթացքում՝ նշված ամեն մի թեմայի շուրջ գրելով համապատասխան քանակի այնպիսի բառեր, որոնք անհրաժեշտաբար օգտագործվում են նրանց կողմից առօրյա կյանքում:

Քարտերի լրացման աշխատանքները վերջացնելուց հետո կատարվեց ստացված նյութի նախատեսված մշակում ու վիճակագրական վերլուծություն: Նախ բոլոր բառերը գրվեցին առանձին քարտերի վրա: Ամեն մի քարտում նշվում էր, թե տվյալ բառը ո՞ր թեմայում է հանդես եկել, ի՞նչ խոսքի մաս է և ո՞ր դպրոցներում է դորժածվել (քաղաքային, թե շրջանային):

Քարտագրման այդպիսի մեթոդիկան մեզ հնարավորություն տվեց համեմատաբար ավելի դյուրին եղանակով առանձնացնել բառերը ըստ առանձին թեմաների: Նվ իրոք, քարտագրման աշխատանքներն ավարտելուց հետո բոլոր բուհերն առանձնացվեցին ըստ թեմաների, ըստ որում յուրաքանչյուր բառի դիմաց առանձին-առանձին ցույց էր տրվում նրա գործածությունների քանակը՝ ըստ վայրերի և ըստ խոսքի մասերի: Այնուհետև, դարձյալ թեմատիկ առումով, բոլոր բառերը համարակալվում են՝ անպայմանորեն հաշվի առնելով նրանց նվազող հաճախականությունը: Թեմատիկ առումով բառերի դասավորությանը (ըստ նվազող հաճախականության, ըստ վայրերի ու խոսքի մասերի) սղյուսակային տեսք տալով, կունենանք՝

Թեմա 1. Մարմնի մասերը

Դաս	Բառը	Հաճախականությունը			Խոսքի մաս
		դյուրական դպրոցներ	քաղաքային դպրոցներ	ընդամենը	
1	գլուխ	141	210	351	Գ
2	ոտք	140	210	350	Գ
3	բերան	139	209	348	Գ
4	ականջ	140	207	347	Գ
5	ձեռք	138	208	346	Գ

Միևնույն սկզբունքով են կազմված նաև մնացած բոլոր թեմաներն արտահայտող բառացանկերը: Եթե նվազող հաճախականության թեմատիկ բառացանկերում մի քանի տարբեր բառեր հանդես են եկել միևնույն հաճախականությամբ, ապա նրանք դասավորվել են ըստ այբբենական կարգի:

Վիճակագրական վերլուծության վերջնական արդյունքները ցույց տվեցին, որ մեր փորձնական ընտրանքի ընդհանուր ծավալը կազմում է 94547 բառ, իսկ տարբեր բառերի ընդհանուր քանակը՝ 2652: Այսպանից հաճախականության ընդհանուր թեմատիկ բառարանի մեջ են մտել 2602 տարբեր բառեր՝ 93263 տարբեր գործածությունների ընդհանուր ծավալով: Ինչպես տեսնում ենք, ընտրանքի փաստական ծավալի և նախօրոք սահմանված մոտավոր ծավալի միջև տարբերությունն այնքան էլ էական չէ: Եղած տարբերությունը, որն սրղյունք է երևեսաների առավել ակտիվության, միայն դրական ազդեցություն կարող է ունենալ ընդհանուր արդյունքների վրա:

Այստեղ ավելորդ չենք համարում նշել բերված վերջին աղյուսակի տվյալների մասին: Նրանում արտահայտված բոլոր թեմաների արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ տարբեր բառերի գործածության տեսակետից հիշյալ թեմաները նշանակալիորեն տարբերվում են իրարից: Օրինակ. Տ-րդ,

9-րդ, 10-րդ, 14-րդ թեմաներում տարրեր բառերի ծավալներն ավելի քան երկու և նույնիսկ երեք անգամ մեծ են 2-րդ, 11-րդ և այլ թեմաներում գործածված տարրեր բառերի ծավալներից: Այդ բանը հիմնականում կարելի է բացատրել թեմաների ավելի լայն ու նեղ ընդգրկումներով, ինչպես նաև երեխաների համապատասխան թեմայի հետ ունեցած ծանոթությամբ ու ամենօրյա հաղորդակցությամբ, մասամբ էլ՝ երեխաների՝ տվյալ թեմայի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրասիրություններով: Աղյուսակից երևում է նաև, որ բոլոր առանձին թեմաներում գործածված տարրեր բառերի ընդհանուր գումարը շատ ավելի մեծ է ամբողջ ընտրանքում հանդես եկած տարրեր բառերի ընդհանուր քանակից: Այդ անհամապատասխանությունը տարակարծության տեղիք չպետք է տա, որովհետև ղեկավար ընտրանքում կան բազմաթիվ բառեր, որոնք օգտագործվել են մի քանի տարրեր թեմաներում:

Փորձնական աշխատանքում ուշադրության արժանի բնագավառ է խոսքի մասերի ու քերականական այլ կարգերի քննարկումը: Մասնաշաղկապ հարցման ժամանակ լրացման քարտերում հիմնականում գործածվել են գոյականներ, բայեր և ածականներ: Պետք է շեշտել, որ յուրաքանչյուր թեմայում տարրեր բառերի գործածության տեսակետից գոյականներն ու բայերն ունեն մոտավորապես հավասար գործածություն: Մինչդեռ բառերի ընդհանուր ծավալային-հաճախական գործածության տեսակետից գոյականներն ունեն բացարձակ գերազանցություն, իսկ ածականների հանդես գալն այստեղ ընդհանրապես շատ անկայուն է: Բայասեռերի գործածության վերլուծությունը ցույց է տալիս, որ երեք սեռերն էլ իրենց բաժինն ունեն լրացման քարտերում: Սակայն սրանց օգտագործման ծավալներն բուռն արկած թեմաներում ունեն տարրեր չափեր: Համեմատությունը պարզում է, որ ներգործական և չնդոք սեռերի կողքին կրավորականը շատ համեստ տեղ է զբաղում: Այդ բանը կարող ենք ցույց տալ թեկուզ «Մարմնի մասերը» թեմայի օրինակով, որտեղ բայը հանդես է եկել 120 տարրեր բառերով, որոնցից.

ներգործական սեռ՝	58
չնդոք սեռ՝	52
կրավորական սեռ՝	10

Լրացման քարտերում բառերը հանդես են եկել հիմնականում ուղիղ ձևով և իրարից անկախ՝

Առանձնացված բառացանկում բացակայում են օժանդակ բառերն ու դերանունները, որոնք, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ համապատասխան վիճակագրական հետազոտություններ, ունեն համեմատաբար ամենաբարձր հաճախականություն: Այդ բառերի անառնումբ բացատրվում է մեր անկետային հարցման էությունը ու նպատակով:

Բացի նվաղող հաճախականության բառացանկից, հավելվածում բերված է նաև բառերի ընդհանուր հաճախականության ցանկը՝ ըստ այբբենական կարգի: Այս կարգի դասավորված յուրաքանչյուր բառի համար տրված են տեղեկություններ նրա ընդհանուր հաճախականության մասին, մատնանշելով նաև այն բոլոր թեմաները, որոնցում հանդիպել է տվյալ բառը:

6 Չափված ենթակայական դերբայով մի քանի բառեր, որոնք հանդես են եկել որպես գոյականներ կամ ածականներ: Որինակ. ուսանող, սովորող, լսող և այլն:

ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՏԻԿ ԲԱՐԱՐԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒՄՈՒՄԸ

Հաճախականության բառարանի ձևավորման աշխատանքներն ավարտելուց հետո անհրաժեշտ էր ստուգել նրա արդյունավետությունը: 1602 բառ պարունակող թեմատիկ բառարանի արդյունավետությունը նպատակահարմար չտանք ստուգել շարադրությունների միջոցով: Ինչ կապակցությամբ կազմվեցին շարադրությունների վեց տարբեր թեմաներ, որոնք բացառապես ելնում էին լրացման քարտերի բովանդակությունից: Դրանք հետևյալներն են.

1. Մեր քաղաքը, 2. պիոներական ճամբարում, 3. բնության գրկում, 4. ինչ մասնագիտություն եմ սիրում, 5. դպրոցական կյանք, 6. վայրի ու բնության կենդանիներ:

Այս թեմաներով շարադրություններ անցկացվեցին երեանի տարբեր դպրոցների⁷ 8—10-րդ դասարաններում: Յուրաքանչյուր դասարան բաժանվում էր վեց շարքի, և ամեն մի շարք գրում էր մեկ թեմայի շուրջ: Շարադրությունները գրում էին հանպատրաստից՝ մեկ ժամվա ընթացքում: Տարբեր դպրոցների հինգ տարբեր դասարաններում գրվեց 132 շարադրություն, որից 14 աշխատանք թերի էր, իսկ 118-ը՝ ամբողջական: 118 շարադրության ընդհանուր ծավալը կազմեց 26668 բառ: Բոլոր աշխատանքները ենթարկվեցին վիճակագրական մանրադիտման և թվային, Ստացված արդյունքները սպասվածից ավելի գուհացուցիչ էին: Բառարանում ընդգրկված բառերը արտացոլում են շարադրությունների առանձին-առանձին տեքստերում հանդես եկած տարբեր բառերի 60-ից մինչև 79 տոկոսը: Արտահայտված տոկոսները համոզիչ կերպով խոսում են փորձնականորեն առանձնացված բառապաշարի բարձր արդյունավետություն ունենալու մասին:

Այժմ տեսնենք, թե հաճախականության ընդհանուր թեմատիկ բառարանը որքանով է արտացոլում շարադրությունների բոլոր առանձին թեմաներում գործածված տարբեր բառերի միջին ծավալը՝ արտահայտած տոկոսներով.

Դաս	Շարադրության թեմաների թեմաներ	Տարբեր բառերի ընդհանուր ծավալը՝ արտահայտված տոկոսն.
1	Մեր քաղաքը	70 0/0
2	Պիոներական ճամբարում	69 0/0
3	Բնության գրկում	63 0/0
4	Ինչ մասնագիտություն եմ սիրում	64 0/0
5	Դպրոցական կյանք	67 0/0
6	Վայրի ու բնության կենդանիներ	73 0/0

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ տարբեր բառերի միջին դուրսդուրությունը համեմատաբար ավելի բարձր տոկոս է կազմում «Վայրի ու բնության կենդանիներ» թեմայում: Այդ նույն տոկոսը համեմատաբար ավելի ցածր է «Բնության գրկում» թեմային վերաբերող շարադրություններում: Դա կարելի է բացատրել տվյալ թեմային բնորոշ յուրահատկություններով: Կոնկրետ դեպքում «Բնության գրկում» թեման համեմատաբար ավելի լայն ընդ-

⁷ Ոչ այն դպրոցներում, որոնցում նախօրոք կատարվել էին փորձնական աշխատանքներ՝ անկետաների լրացման կապակցությամբ:

յրկում ունի և նրանում օգտագործվել են շատ ավելի ազատ, ոչ կայուն բառեր, կապակցություններ և այլն: Իսկ «Վայրի ու ընտանի կենդանիներ» թեման նախորդի համեմատ չունի այնքան լայն ընդգրկում և սրանում գործածված բառերն ավելի կոնկրետ են ու կայուն:

Եթե մեր հաճախականության փորձնական բառարանի արդյունավետության ստուգված արդյունքները համեմատենք Շտեյնֆելդտի բառարանի արդյունավետության ստուգված արդյունքների հետ, կտեսնենք, որ Շտեյնֆելդտի բառարանի 2500 ամենահաճախ գործածված բառերը արտահայտում են համապատասխան տեքստի ընդհանուր ծավալի 80%, իսկ մեր թեմատիկ հաճախականության բառարանի 2600 բառը արտահայտում է համապատասխան ինքնակերպում հանդես եկած տարրեր բառերի մոտ 68%: Այս երկու բառարանների տվյալների արդյունավետության ստուգված արդյունքների համեմատությունը հավասար պայմաններում չէ, որ կատարվում է: Դրանք իրենց մեջ պարունակում են երկու տարրեր լեզուների տարրեր հատվածների տարրեր: Առաջինը՝ առաջ լեզվի գրավոր խոսքի, իսկ երկրորդը՝ հայոց լեզվի բանավոր խոսքի թեմատիկ առումով փորձնական միավորներ: Այնուհետև Շտեյնֆելդտի 2500 ամենագործածական բառարանի վերջին բառը հետադուրս տեսնվում 14 անգամից պակաս չի գործածվել, իսկ մեր բառարանում ընդգրկվել են այն բոլոր բառերը, որոնք լրացման քարտերում հանդես են եկել մեկ և ավելի անգամ: Սակայն նշված անհավասարությունները մեղ չեն խանգարում հակադրելու հիշյալ բառարանների տվյալները: Այդ հակադրությունն առավել կարևոր է հատկապես այն իմաստով, որ մեր ոչ այնքան հավաստի տեղեկություններով օժտված բառարանը կարողացել է արտահայտել որոշակի թեմաներում հանդես եկած տարրեր բառերի 68%, որը տվյալ դեպքում բավական բարձր ցուցանիշ է: Իսկ Շտեյնֆելդտի համեմատաբար շատ ավելի հավաստի տեղեկություններով օժտված բառարանը կարողանում է արտահայտել որոշակի տեքստի ոչ թե տարրեր բառերի, այլ տեքստի ընդհանուր ծավալի մոտ 80%: Մինչդեռ միջակայքական ուսումնասիրությունները⁸ ցույց են տալիս, որ տարրեր բառերի գույքագրիման տոկոսն անհրաժեշտ երկարություն ունեցող տեքստերում միշտ էլ ավելի ցածր է ընդհանուր ծավալային ալտահայտման տոկոսից:

Երկու բառարանների արդյունավետության արդյունքների համեմատության փաստը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ գրավոր ու բանավոր խոսքերի միավորների գործածության փոխհարաբերությունները նույնությամբ չի կարելի տարածել միմյանց վրա⁹: Սրանցից չորաքանչյուրի տարրերն ունեն իրենց սեռյն գործածության ոլորտն ու փոխհարաբերությունները: Իսկ վկայում է նաև, որ հավասար պայմաններում բանավոր խոսքի առանձնացված բառապաշարը կարող է արտահայտել համապատասխան տեքստի ընդհանուր ծավալի ավելի մեծ մասը, քան գրավոր խոսքի նույն քանակի տվյալներ պարունակող բառացանկը:

⁸ См. Ю. Марков, О роли лексической статистики при отборе словарного минимума, «Русский язык в национальной школе», 1963, № 4, В. Костомаров, Принципы отбора лексического минимума, «Русский язык в национальной школе», 1963, № 1

⁹ См. Э. Թ. Մարկովի նշվ. հոդվածը, էջ 13